# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Ոսկե ամրան» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ..... 4

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ ՎԿ «Գյումրի-1» մասնաճյուղը հաշվառումից հանելու Մասին ..... 4

ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Կումայրի», «Ամերիաբանկ» ՓԲԸ «Արշակունյաց Պլյուս», «Ինեկոբանկ» ՓԲԸ «Տիգրան Մեծ», «Արտաշատ» և «Աշտարակ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին ..... 4

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ «Գարաժ մոլ» մասնաճյուղը գրանցելու մասին ... 4

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 150Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին ..... 4

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 151-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» . 5

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 152-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ..... 6

**Վիճակագրական ամփոփագիր** ..... 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Ոսկե ամրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 146Ա):

- ***Հաշվառումից հանվել է*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Գյումրի-1» մասնաճյուղը (որոշում թիվ 147Ա):

- ***Թույլատրվել է*** «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Կումայրի», «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արշակունյաց Պյուս», «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Տիգրան Մեծ», «Արտաշատ» և «Աշտարակ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/349Ա, 1/370Ա, 1/371Ա):

- ***Գրանցվել է*** «Մոգո» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գարաժ մոլ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/1/372. 1Ա):

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 4-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2024 թ. սեպտեմբերի 10-ի թիվ 150Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 7.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 9.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 6. 0%:

***17 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 151-Ն***

## *Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** ապահովելու փոխանակման աճուրդների մասին կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության ամբողջականությունը,

***հիմք ընդունելով*** «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 82-րդ հոդվածը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում հանել «, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը» բառերը:
2. Որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ի 61-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   ««Գործարքի տեսակը (առք/վաճառք)» սյունակում լրացվում է «առք», «վաճառք», «առք-փոխանակում», «վաճառք-փոխանակում» կամ «առք-տեղաբաշխում»՝ կախված հաշվետվություն ներկայացնող ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից գործարքը առք է, թե՝ վաճառք: Ընդ որում, տեղաբաշխման ընթացքում ձեռք բերված արժեթղթերի համար նշվում է «առք-տեղաբաշխում», փոխանակման աճուրդի ժամանակ ձեռք բերված արժեթղթերի համար նշվում է «առք-փոխանակում», փոխանակման աճուրդի ժամանակ վաճառված արժեթղթերի համար նշվում է «վաճառք-փոխանակում»:»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան***

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2024 թ. սեպտեմբերի 17-ին (ՀՀԳՏ, 26.09. 2024):*

## *17 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 152-Ն*

## *Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** ապահովելու փոխանակման աճուրդների մասին Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության ամբողջականությունը,

***հիմք ընդունելով*** «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 141-րդ հոդվածը և 207-րդ հոդվածի 1-ին մասը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը հաստատելու մասին» թիվ 356-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում հանել «, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը» բառերը:
2. Որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 37.1-րդ կետի «պետական արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման» բառերը փոխարինել «պետական արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման/փոխանակման» բառերով:

2) Կանոնակարգի 37.4-րդ կետի «պետական արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման» բառերը փոխարինել «պետական արժեթղթերի տեղաբաշխման/հետգնման/փոխանակման» բառերով:

3) Կանոնակարգի 48-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Թողարկում/տեղաբաշխում/հետգնում/փոխանակում» սյունակում լրացվում է «տեղաբաշխում», եթե հայտարարությունն առնչվում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի կազմակերպմանը, կամ լրացվում է «հետգնում», եթե հայտարարությունն առնչվում է պետական պարտատոմսերի հետգնման աճուրդի կազմակերպմանը, կամ «թողարկում», եթե նախատեսվում է իրականացնել պետական պարտատոմսերի թողարկում, կամ «փոխանակում», եթե հայտարարությունն առնչվում է պետական պարտատոմսերի փոխանակման աճուրդի կազմակերպմանը:»:

4) Կանոնակարգի 48-րդ կետի 4-րդ ենթակետի «պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման)» բառերը փոխարինել «պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման/փոխանակման» բառերով:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2024 թ. սեպտեմբերի 17-ին (ՀՀԳՏ, 26.09. 2024):*

5) Կանոնակարգի 48-րդ կետի 5-րդ ենթակետի «պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) բառերը» փոխարինել «պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման/փոխանակման» բառերով:

6) Կանոնակարգի 48-րդ կետի 6-րդ ենթակետի «պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման)» բառերը փոխարինել «պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման/փոխանակման» բառերով:

7) Կանոնակարգի 48-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
««Աճուրդի տեսակը» սյունակում լրացվում է «տեղաբաշխման աճուրդ», «տեղաբաշխման լրացուցիչ աճուրդ» կամ «հետգնման աճուրդ»: Ընդ որում, փոխանակման աճուրդի դեպքում ևս նշվում է համապատասխանաբար «տեղաբաշխման աճուրդ» և «հետգնման աճուրդ»»:

8) Կանոնակարգի 48-րդ կետի 10–րդ ենթակետի «պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման/թողարկման» բառերը փոխարինել «պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման/թողարկման/փոխանակման» բառերով:
9) Կանոնակարգի հավելված 11-ի 2-րդ աղյուսակի «Թողարկում/տեղաբաշխում/հետգնում» բառերը փոխարինել «Թողարկում/տեղաբաշխում/հետգնում/փոխանակում» բառերով:

10) Կանոնակարգի հավելված 11-ի 2-րդ աղյուսակի «Տեղաբաշխման աճուրդի տեսակը» բառերը փոխարինել «Աճուրդի տեսակը» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան***

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024)

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:**

**Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:**

**Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:**

**Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:**

**Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:**

**Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:**

**Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:**

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-592
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


Իրական հատվածի ցուցանիշներ ..... **11**

*Մակրոտնտեսական ցուցանիշներ*

*Գնաճ*

*Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին*

*Բնականոն գնաճ*

*Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները*

Արտաքին հատվածի ցուցանիշներ ..... 15

*Ապրանքների արտահանում և ներմուծում*

*Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները*

*Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք*

*Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը*

*ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը*

Պետական բյուջեի ցուցանիշներ ..... 20

*Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները*

Դրամավարկային ցուցանիշներ ..... 21

*Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ*

*Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ*

*ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ*

*Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում*

Ֆինանսական շուկա ..... 31

*Տոկոսադրույքներ*

*Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը*

*ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ*

*Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը*

*Ռեպո շուկայի շրջանառությունը*

*Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալներն ու տոկոսադրույքները*

*Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի*

*Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը*

*Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը*

*Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը*

*ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները*

*Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը*

*ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները*

*ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները*

*ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները*

*Արժութային շուկայում իրականացված գործառնությունները*

*Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը*


*Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը*

*Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը*

Վարկային ներդրումներ ..... 52
*Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների*
*Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության*
*Առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը*
*Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը*
*Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների*
*ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը*
*Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների*
*Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության*
*Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը*
*Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը*
Առևտրային բանկերի ավանդներ ..... 62
*Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների*
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ ..... 64
*Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը*
*ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*ՀՀ առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը*
*ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը*
*ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ*
*Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ*
*Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ*
*Կառավարման վերցված միջոցներ*
*Պահառության վերցված արժեթղթեր*
*ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*Գրավատների ցուցանիշներ*
*Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ*
Վճարահաշվարկային համակարգ ..... **73**
*Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ*
*ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ*
*ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը*
*ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների*
*ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում*

## ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| *Անվանում* | *2024 թ. օգոստոսի իրական աճի փոփոխությունը 2023 թ. օգոստոսի նկատմամբ (%)* | *2024 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2023 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)* |
|---|---|---|
| Տնտեսական ակտիվության ցուցանիշ | 5.6 | 7.0 |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալ | 2.1 | 4.6 |
| Շինարարության ծավալ | 16.5 | 14.7 |
| Առևտրի շրջանառության ծավալ | 14.9 | 13.4 |
| Ծառայությունների ծավալ (առանց առևտրի) | 9.5 | 11.6 |
| Էլեկտրաէներգիայի արտադրություն[1] | 0.0 | 8.8 |
| Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ | 4.5[2] | 4.1[3] |



## ԳՆԱՃ


| *Ժամանակաշրջան* | 2021 | 2022 | 2023 | 2024 |
|---|---|---|---|---|
| *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 2.2 | 1.6 | 1.4 | 1.2 |
| Փետրվար | 0.6 | 0.1 | 0.1 | -0.7 |
| Մարտ | 1.0 | 1.8 | -0.7 | -0.2 |
| Ապրիլ | 1.3 | 2.3 | 0.1 | 0.6 |
| Մայիս | -0.4 | 0.1 | -1.8 | -0.8 |
| Հունիս | -0.8 | 0.3 | -1.4 | -0.9 |
| Հուլիս | -0.5 | -1.4 | -1.0 | -0.4 |
| Օգոստոս | 0.4 | 0.2 | 0.1 | 0.1 |
| Սեպտեմբեր | -0.1 | 0.6 | 0.9 | 0.2 |
| Հոկտեմբեր | 0.7 | 0.3 | 0.3 | |
| Նոյեմբեր | 1.7 | 1.1 | 0.5 | |
| Դեկտեմբեր | 1.6 | 1.1 | 0.9 | |
| *նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 4.5 | 7.1 | 8.1 | -0.9 |
| Փետրվար | 5.3 | 6.5 | 8.1 | -1.7 |
| Մարտ | 5.8 | 7.4 | 5.4 | -1.2 |
| Ապրիլ | 6.2 | 8.4 | 3.2 | -0.7 |
| Մայիս | 5.9 | 9.0 | 1.3 | 0.3 |
| Հունիս | 6.5 | 10.3 | -0.5 | 0.8 |
| Հուլիս | 8.2 | 9.3 | -0.1 | 1.4 |
| Օգոստոս | 8.8 | 9.1 | -0.2 | 1.3 |
| Սեպտեմբեր | 8.9 | 9.9 | 0.1 | 0.6 |
| Հոկտեմբեր | 9.1 | 9.5 | 0.1 | |
| Նոյեմբեր | 9.6 | 8.8 | -0.5 | |
| Դեկտեմբեր | 7.7 | 8.3 | -0.6 | |

## ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ[5]

| *Անվանում* | *2024 թ. սեպտեմբերը 2023 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)* | *Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* |
|---|---|---|
| **Գնաճ** | **0.6** | |
| Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք | -1.0 | -0.40 |
| Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ | 4.1 | 0.18 |
| Հագուստ և կոշիկ | -3.4 | -0.11 |
| Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ | 0.6 | 0.10 |
| Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն | -4.0 | -0.17 |
| Առողջապահություն | 2.0 | 0.20 |
| Տրանսպորտ | 9.0 | 0.71 |
| Կապ | 0.5 | 0.02 |
| Հանգիստ և մշակույթ | 0.3 | 0.00 |
| Կրթություն | 7.8 | 0.16 |
| Ռեստորաններ և հյուրանոցներ | 2.7 | 0.06 |
| Տարբեր ապրանքներ և ծառայություններ | -1.9 | -0.10 |

## ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ [5,6]

| ժամանակաշրջան | 2021 | 2022 | 2023 | 2024 |
|---|---|---|---|---|
| *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 0.7 | 0.3 | 0.2 | 0.0 |
| Փետրվար | 0.8 | 0.6 | 0.1 | -0.3 |
| Մարտ | 0.8 | 1.1 | -0. 1 | -0.2 |
| Ապրիլ | 0.6 | 1.3 | 0.0 | -0.1 |
| Մայիս | 0.4 | 0.7 | -0.1 | -0.1 |
| Հունիս | 0.3 | 1.0 | -0.2 | 0.0 |
| Հուլիս | 0.3 | 0.7 | 0.0 | 0.0 |
| Օգոստոս | 0.3 | 0.4 | 0.2 | 0.2 |
| Սեպտեմբեր | 0.3 | 0.7 | 0.2 | 0.7 |
| Հոկտեմբեր | 0.4 | 0.3 | 0.4 | |
| Նոյեմբեր | 0.6 | 0.3 | 0.1 | |
| Դեկտեմբեր | 0.5 | 0.4 | 0.1 | |
| *նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 3.0 | 5.8 | 7.9 | 0.5 |
| Փետրվար | 3.7 | 5.6 | 7.3 | 0.1 |
| Մարտ | 4.6 | 5.9 | 6. 0 | 0.1 |
| Ապրիլ | 4.6 | 6.6 | 4.6 | 0.0 |
| Մայիս | 5.1 | 7.0 | 3.8 | 0.0 |
| Հունիս | 5.5 | 7.8 | 2.5 | 0.3 |
| Հուլիս | 5.9 | 8.3 | 1.7 | 0.3 |
| Օգոստոս | 6.1 | 8.3 | 1.5 | 0.3 |
| Սեպտեմբեր | 6.1 | 8.7 | 1.1 | 0.7 |
| Հոկտեմբեր | 6.2 | 8.6 | 1.2 | |
| Նոյեմբեր | 6.6 | 8.2 | 1.0 | |
| Դեկտեմբեր | 6.2 | 8.1 | 0.7 | |



## ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [5,6]

| Անվանում | 2024 թ. սեպտեմբերը 2023 թ. սեպտեմբերի նկատմամբ | Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ) |
|---|---|---|
| **Բնականոն գնաճ, այդ թվում՝** | **0.7** | |
| Օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայություններ | 25.0 | 0.55 |
| Գազ ածխաջրածնային, սեղմված (բութան, պրոպան)՝ կենցաղային | 47.6 | 0.13 |
| Բարձրագույն կրթության հաստատությանը վճարված ուսուցման վարձը | 7.0 | 0.12 |
| Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար | 4.4 | 0.09 |
| Օղի հայրենական արտադրության | 14.8 | 0.08 |
| Օղի այլ երկրների արտադրության | 11.1 | 0.06 |
| Վիրահատական ծառայություններ | 2.3 | 0.05 |
| Սրտանոթային դեղամիջոցներ | 3.7 | 0.05 |
| Հնդկացորեն | -12.2 | -0.04 |
| Պանիր տնական | -7.7 | -0.04 |
| Բուսական յուղ արևաձաղկի | -6.1 | -0.08 |
| Օճառահեղուկ (շամպուն) | -12.0 | -0.09 |
| Պանիր կովի կաթից | -6.3 | -0.10 |
| Հավի միս (ամբողջական հավ)՝ թարմ, պաղեցրած | -6.6 | -0.11 |
| Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար | -12.4 | -0.18 |

*[1] Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներում ներառված են նաև էլեկտրաէներգիայի փոխհոսքերի մասով ինքնավար արտադրողների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները:*

*[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:*

*[3] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:*

*[4] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի x-13Arima -seats մեթոդով կատարված հաշվարկների:*

*[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:*

*[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:*

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

| Անվանում | 2024 թ. սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար) | 2024 թ. սեպտեմբերը 2023 թ. սեպտեմբերի նկատմամբ (%) | 2024 թ. հունվար-սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար) | 2024 թ. հունվար-սեպտեմբերը 2023 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| Արտահանում (FOB) | 857.1 | 138.9 | 10595.4 | 2.1 անգամ |
| Ներմուծում (CIF) | 1080.8 | 111.9 | 13122.5 | 154.2 |
| Առևտրային հաշվեկշիռ | -223.7 | 64.1 | -2527.1 | 75.6 |

## ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

*հազար ԱՄՆ դոլար*

| *Երկիր* | 2023 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Սեպտեմբեր | | | Հունվար-Սեպտեմբեր | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 303322 | 44290 | 259032 | 3001610 | 504570 | 2497040 |
| ԱՄՆ | 53003 | 36001 | 17002 | 483654 | 324072 | 159582 |
| Ուկրաինա | 11 | 1045 | -1034 | 418 | 12145 | -11727 |
| Ղազախստան | 3246 | 2378 | 869 | 31394 | 11610 | 19784 |
| Գերմանիա | 6732 | 11136 | -4404 | 78574 | 97731 | -19157 |
| Իսպանիա | 2731 | 10638 | -7907 | 17133 | 96141 | -79008 |
| Ֆրանսիա | 4721 | 7175 | -2454 | 39938 | 63236 | -23298 |
| ԱՄԷ | 5567 | 80898 | -75332 | 57380 | 401126 | -343746 |
| Չինաստան | 439 | 7191 | -6752 | 3996 | 65712 | -61715 |
| Թուրքիա | 157 | 1114 | -957 | 2747 | 12333 | -9586 |
| Այլ երկրներ | 64501 | 145592 | -81090 | 547456 | 1345240 | -797784 |
| **Ընդամենը** | **444429** | **347456** | **96973** | **4264301** | **2933917** | **1330384** |

*հազար ԱՄՆ դոլար*

| *Երկիր* | 2024 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Սեպտեմբեր | | | Հունվար-Սեպտեմբեր | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 213462 | 48024 | 165438 | 2571009 | 449425 | 2121583 |
| ԱՄՆ | 54936 | 58509 | -3573 | 505337 | 430835 | 74502 |
| Ուկրաինա | 199 | 851 | -652 | 1144 | 7845 | -6701 |
| Ղազախստան | 4356 | 726 | 3631 | 38924 | 10603 | 28320 |
| Գերմանիա | 6937 | 11340 | -4403 | 66241 | 75380 | -9138 |
| Իսպանիա | 2095 | 8006 | -5911 | 17667 | 106022 | -88355 |
| Ֆրանսիա | 4415 | 5602 | -1187 | 44642 | 58156 | -13513 |
| ԱՄԷ | 8675 | 48174 | -39499 | 83049 | 642916 | -559867 |
| Չինաստան | 437 | 10202 | -9765 | 4190 | 73493 | -69302 |
| Թուրքիա | 358 | 1236 | -878 | 1576 | 8898 | -7322 |
| Այլ երկրներ | 105960 | 111925 | -5965 | 630112 | 1212338 | -582226 |
| **Ընդամենը** | **401829** | **304593** | **97236** | **3963891** | **3075911** | **887980** |


## ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


*մլն ՀՀ դրամ*

| Երկիր | 2023 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Սեպտեմբեր | | | Հունվար-Սեպտեմբեր | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 117411 | 17132 | 100279 | 1168118 | 195708 | 972410 |
| ԱՄՆ | 20530 | 13928 | 6602 | 187803 | 125851 | 61953 |
| Ուկրաինա | 4 | 404 | -400 | 162 | 4720 | -4558 |
| Ղազախստան | 1256 | 919 | 337 | 12189 | 4506 | 7684 |
| Գերմանիա | 2604 | 4306 | -1702 | 30468 | 37982 | -7514 |
| Իսպանիա | 1056 | 4114 | -3058 | 6649 | 37326 | -30677 |
| Ֆրանսիա | 1827 | 2777 | -951 | 15515 | 24546 | -9031 |
| ԱՄԷ | 2152 | 31283 | -29131 | 22238 | 155887 | -133650 |
| Չինաստան | 170 | 2782 | -2612 | 1551 | 25498 | -23947 |
| Թուրքիա | 61 | 431 | -371 | 1069 | 4789 | -3721 |
| Այլ երկրներ | 24951 | 56333 | -31381 | 212601 | 523670 | -311069 |
| ***Ընդամենը*** | ***172021*** | ***134409*** | ***37613*** | ***1658364*** | ***1140483*** | ***517880*** |

*մլն ՀՀ դրամ*

| Երկիր | 2024 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Սեպտեմբեր | | | Հունվար-Սեպտեմբեր | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 82699 | 18602 | 64097 | 1010274 | 176639 | 833634 |
| ԱՄՆ | 21280 | 22663 | -1384 | 198638 | 169497 | 29141 |
| Ուկրաինա | 77 | 329 | -252 | 446 | 3082 | -2635 |
| Ղազախստան | 1687 | 281 | 1406 | 15262 | 4177 | 11085 |
| Գերմանիա | 2687 | 4394 | -1707 | 26021 | 29615 | -3595 |
| Իսպանիա | 812 | 3101 | -2290 | 6943 | 41589 | -34645 |
| Ֆրանսիա | 1710 | 2170 | -460 | 17574 | 22844 | -5269 |
| ԱՄԷ | 3360 | 18666 | -15306 | 32500 | 252165 | -219666 |
| Չինաստան | 169 | 3952 | -3783 | 1654 | 28784 | -27130 |
| Թուրքիա | 139 | 479 | -340 | 619 | 3484 | -2865 |
| Այլ երկրներ | 41045 | 43360 | -2315 | 247452 | 476773 | -229321 |
| ***Ընդամենը*** | ***155664*** | ***117998*** | ***37667*** | ***1557383*** | ***1208649*** | ***348735*** |






## ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

| 2023 [5] | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս | Հ | Ն | Դ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100) | 231.9 | 238.7 | 244.1 | 245.9 | 241.3 | 242.4 | 244.6 | 249.2 | 252.4 | 242.6 | 236.9 | 235.4 |
| Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100) | 298.6 | 309.0 | 318.4 | 323.8 | 324.5 | 332.4 | 341.1 | 349.6 | 353.3 | 340.7 | 332.4 | 329.0 |

| 2024 | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս | Հ | Ն | Դ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100) | 251.5 | 252.4 | 256.1 | 264.7 | 259.8 | 253.9 | 249.7 | 249.1 | 249.7 | | | |
| Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100) | 348.4 | 355.2 | 360.4 | 374.2 | 372.4 | 369.4 | 367.5 | 367.8 | 369.4 | | | |

*[1] 2023 թվականին իրականացվել են արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեթոդաբանական փոփոխություններ: Մասնավորապես՝ 5 տարվա ամրագրված միջինները փոխարինվել են 3 տարվա սահող միջիններով: 2023 թվականի համար արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեջ օգտագործվել են 2020–2022 թթ. արտաքին առևտրաշրջանառության տվյալների հիման վրա հաշվարկված միջին կշիռները:*

*[2] Հաշվարկում ընդգրկվել են ՀՀ ամբողջ արտաքին առևտրաշրջանառության առնվազն 85% ծածկույթ ապահովող երկրների տվյալները: Հաշվարկներում ներառված չէ ոչ առևտրային բնույթի և պատվիրատուի հումքով կատարվող առևտրաշրջանառությունը, ինչպես նաև ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալները՝ պայմանավորված ըստ երկրների տվյալների բացակայությամբ:*

*[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ՀՀ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:*

*[4] Ինդեքսի աճը նշանակում է արժևորում:*

*[5] 2024 թ. սկզբին շարքերը վերանայվել են՝ պայմանավորված գործընկեր երկրների տվյալների վերանայմամբ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


*մլն ԱՄՆ դոլար*

| Ցուցանիշներ | 2023 | 2024 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ [2] | Հ | Փ | Մ [2] | Ա | Մ | Հ [2] | Հ | Օ | Ս [3] |
| ***Համախառն միջազգային պահուստներ*** | **3607.6** | **3575.5** | **3380.9** | **3303.9** | **3188.2** | **3217.9** | **3354.2** | **3410.9** | **3604.5** | **3566.0** |
| Ոսկի | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 0.5 | 57.7 | 15.0 | 9.5 | 9.5 | 18.4 | 7.7 | 7.8 | 13.5 | 9.2 |
| Պահուստային դիրքը ԱՄՀ-ում | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 |
| Արտարժույթ [1] | 3606.9 | 3517.6 | 3365.7 | 3294.3 | 3178.5 | 3199.3 | 3346.3 | 3402.9 | 3590.8 | 3556.6 |

*[1] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

*[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

*[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


*մլն ԱՄՆ դոլար*

| Ցուցանիշներ | 2023 | 2024 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ [2] | Հ | Փ | Մ [2] | Ա | Մ | Հ [2] | Հ | Օ | Ս [3] |
| ***Համախառն արտաքին պարտավորություններ*** | **846.4** | **833.1** | **831.4** | **834.2** | **860.4** | **825.3** | **807.6** | **805.1** | **812.8** | **820.0** |
| ԱՄՀ վարկ | 76.0 | 75.6 | 74.7 | 73.5 | 73.5 | 71.9 | 65.3 | 66.1 | 66.6 | 67.2 |
| ՀՓԻ տեղաբաշխում | 285.6 | 284.2 | 281.4 | 281.7 | 281.5 | 280.6 | 279.9 | 283.1 | 285.9 | 288.3 |
| Այլ վարկեր | 478.7 | 468.6 | 470.4 | 469.2 | 461.2 | 457.3 | 446.2 | 450.4 | 458.3 | 461.4 |
| Այլ պարտավորություններ | 6.1 | 4.7 | 4.9 | 9.7 | 44.1 | 15.5 | 16.2 | 5.5 | 1.9 | 3.2 |

*[1] Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

*[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

*[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*մլն ՀՀ դրամ*

| | **Պահանջներ Կառավարության նկատմամբ** | **Պարտավորություններ Կառավարության նկատմամբ** | **Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ** |
|---|---|---|---|
| | Պետական պարտատոմսեր | Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ՝ ԾԻԳ-երի միջոցները) | |
| ***2023*** | | | |
| Դեկտեմբեր | 9291 | 392074 | **-382783** |
| ***2024*** | | | |
| Հունվար | 9427 | 499321 | **-489894** |
| Փետրվար | 9469 | 459505 | **-450036** |
| Մարտ | 9619 | 498615 | **-488995** |
| Ապրիլ | 9453 | 477664 | **-468211** |
| Մայիս | 9564 | 446746 | **-437182** |
| Հունիս | 9652 | 496188 | **-486536** |
| Հուլիս | 9728 | 498933 | **-489205** |
| Օգոստոս | 9543 | 496130 | **-486587** |
| Սեպտեմբեր | 9607 | 512296 | **-502689** |

## ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

| | Փողի բազա [1] (մլրդ ՀՀ դրամ) | Շրջանառությունում կանխիկ դրամ (մլրդ ՀՀ դրամ) | Ցպահանջ ավանդներ դրամով (մլրդ ՀՀ դրամ) | M1 [2] (մլրդ ՀՀ դրամ) | Ժամկետային ավանդներ դրամով (մլրդ ՀՀ դրամ) | M2 [3] (մլրդ ՀՀ դրամ) | Արտարժույթով ավանդներ (մլրդ ՀՀ դրամ) | M2X [4] (մլրդ ՀՀ դրամ) | Փողի ազանգվածի [5] | Դրամային բազմապատկիչ [6] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2023** | | | | | | | | | | |
| Դեկտեմբեր | 1845623 | 778133 | 1271862 | 2049995 | 1360163 | 3410158 | 1772844 | 5183002 | 2.81 | 2.53 |
| **2024** | | | | | | | | | | |
| Հունվար | 1679946 | 737963 | 1177029 | 1914993 | 1388682 | 3303675 | 1762411 | 5066086 | 3.02 | 2.81 |
| Փետրվար | 1649791 | 731218 | 1192449 | 1923667 | 1411880 | 3335547 | 1778919 | 5114466 | 3.10 | 2.87 |
| Մարտ | 1737134 | 731731 | 1186287 | 1918018 | 1431981 | 3349999 | 1716424 | 5066423 | 2.92 | 2.64 |
| Ապրիլ | 1686351 | 721677 | 1162723 | 1884399 | 1449154 | 3333553 | 1674451 | 5008004 | 2.97 | 2.67 |
| Մայիս | 1640899 | 737555 | 1254726 | 1992281 | 1456492 | 3448773 | 1776672 | 5225445 | 3.18 | 2.88 |
| Հունիս | 1846945 | 767702 | 1243052 | 2010754 | 1475550 | 3486304 | 1771320 | 5257624 | 2.85 | 2.51 |
| Հուլիս | 1691941 | 795381 | 1270599 | 2065981 | 1507359 | 3573340 | 1766941 | 5340281 | 3.16 | 2.91 |
| Օգոստոս | 1784558 | 805897 | 1302016 | 2107913 | 1539781 | 3647694 | 1796808 | 5444502 | 3.05 | 2.84 |
| Սեպտեմբեր | 1913868 | 802078 | 1291411 | 2093489 | 1592338 | 3685827 | 1784049 | 5469876 | 2.86 | 2.54 |

*[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվներ (դրամով և արտարժույթով):*


*[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:*


*[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:*


*[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:*


*[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:*

*[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:*


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
2000000
1800000
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
2020
2021
2022
2023
2024
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
6000000
5500000
5000000
4500000
4000000
3500000
3000000
2500000
2000000
1500000
1000000
500000
0
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
2020
2021
2022
2023
2024
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
2020
2021
2022
2023
2024



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
35
30
25
20
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշիռ
2020
2021
2022
2023
2024


## ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


*մլն ՀՀ դրամ*


| ժամկետ | Փողի բազա | Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ | M1 | M2 | M2X |
|---|---|---|---|---|---|
| ***2023*** | | | | | |
| Հունվար | 1723429 | 641368 | 1600721 | 2738543 | 4348387 |
| Փետրվար | 1687105 | 648494 | 1624505 | 2781468 | 4409234 |
| Մարտ | 1739134 | 654294 | 1668938 | 2840956 | 4477425 |
| Ապրիլ | 1661467 | 667017 | 1690297 | 2882513 | 4574249 |
| Մայիս | 1645722 | 680623 | 1727836 | 2957670 | 4610769 |
| Հունիս | 1690889 | 689052 | 1761903 | 3012248 | 4688236 |
| Հուլիս | 1628390 | 708009 | 1785035 | 3075589 | 4752541 |
| Օգոստոս | 1621026 | 713001 | 1812443 | 3130455 | 4828833 |
| Սեպտեմբեր | 1684568 | 716362 | 1830190 | 3159421 | 4881397 |
| Հոկտեմբեր | 1654522 | 730549 | 1852488 | 3206221 | 4983703 |
| Նոյեմբեր | 1669690 | 731922 | 1884176 | 3250228 | 5013112 |
| Դեկտեմբեր | 1658045 | 740175 | 1951924 | 3313426 | 5051885 |
| ***2024*** | | | | | |
| Հունվար | 1680967 | 748746 | 1931695 | 3323490 | 5066570 |
| Փետրվար | 1702660 | 756663 | 1964564 | 3370504 | 5106239 |
| Մարտ | 1693041 | 756472 | 1940089 | 3380057 | 5054267 |
| Ապրիլ | 1727473 | 746078 | 1940592 | 3399273 | 5085759 |
| Մայիս | 1712405 | 755138 | 2033650 | 3467048 | 5287249 |
| Հունիս | 1797843 | 765398 | 2025970 | 3491977 | 5331813 |
| Հուլիս | 1732636 | 781269 | 2050527 | 3553577 | 5387833 |
| Օգոստոս | 1829771 | 789392 | 2081811 | 3603985 | 5442293 |
| Սեպտեմբեր | 1835741 | 787844 | 2094542 | 3678257 | 5475094 |

*[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-13-ARIMA հարթեցման եղանակը:*


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2000000
1800000
1600000
1400000
1200000
1000000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
900000
800000
700000
600000
500000
400000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3900000
3500000
3100000
2700000
2300000
1900000
1500000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
5700000
5300000
4900000
4500000
4100000
3700000
3300000
2900000
2500000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*մլն ՀՀ դրամ*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2023 | 2024 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ [2] | Հ | Փ | Մ [2] | Ա | Մ | Հ [2] | Հ | Օ | Ս [3] |
| *(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ*** [1] | ***1117701*** | ***1107091*** | ***1030420*** | ***971289*** | ***903195*** | ***926821*** | ***988499*** | ***1011280*** | ***1081890*** | ***1063475*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | ***727923*** | ***572855*** | ***619370*** | ***765844*** | ***783156*** | ***714079*** | ***858446*** | ***680661*** | ***702668*** | ***850393*** |
| Կառավարություն | -382783 | -489894 | -450036 | -488995 | -468211 | -437182 | -486536 | -489205 | -486587 | -502689 |
| Բանկեր | 658082 | 607013 | 615019 | 795010 | 782381 | 684017 | 885049 | 714163 | 741348 | 913145 |
| այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր | 350370 | 300000 | 305075 | 480462 | 482569 | 385171 | 581524 | 410000 | 430279 | 598130 |
| ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դրամական միջոցների ներգրավում (-) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | -1000 |
| Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հակադարձ ռեպո (-) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ այլ ակտիվներ | 452624 | 455736 | 454388 | 459830 | 468986 | 467243 | 459933 | 455703 | 447907 | 439936 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ*** | ***1845623*** | ***1679946*** | ***1649791*** | ***1737134*** | ***1686351*** | ***1640899*** | ***1846945*** | ***1691941*** | ***1784558*** | ***1913868*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | 911455 | 852071 | 845822 | 850939 | 845215 | 855916 | 885266 | 915033 | 930076 | 929502 |
| Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով | 392208 | 305375 | 298951 | 403142 | 389386 | 326487 | 488147 | 293961 | 336468 | 507992 |
| Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով | 493994 | 502802 | 483247 | 464515 | 434550 | 440339 | 454921 | 462789 | 496522 | 458293 |
| Այլ հաշիվներ | 47967 | 19698 | 21771 | 18538 | 17200 | 18158 | 18611 | 20159 | 21492 | 18079 |
| Այլ հաշիվներ ՀՀ դրամով | 45985 | 16460 | 18882 | 14841 | 14413 | 15209 | 15775 | 16866 | 16952 | 13348 |
| Այլ հաշիվներ արտարժույթով | 1982 | 3238 | 2889 | 3697 | 2787 | 2949 | 2836 | 3293 | 4541 | 4731 |
| *(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ*** | - | ***-10609*** | ***-76671*** | ***-59131*** | ***-68094*** | ***23625*** | ***61679*** | ***22781*** | ***70610*** | ***-18415*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | - | ***-155068*** | ***46515*** | ***146474*** | ***17312*** | ***-69077*** | ***144367*** | ***-177785*** | ***22008*** | ***147724*** |
| Կառավարություն | - | -107111 | 39857 | -38959 | 20784 | 31029 | -49355 | -2668 | 2618 | -16102 |
| Բանկեր | - | -51069 | 8006 | 179991 | -12629 | -98364 | 201032 | -170886 | 27185 | 171797 |
| այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր | - | -50370 | 5075 | 175387 | 2108 | -97399 | 196354 | -171524 | 20279 | 167851 |
| Դրամական միջոցների ներգրավում (-) | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1000 |
| Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-) | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-) | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ այլ ակտիվներ | - | 3112 | -1348 | 5442 | 9156 | -1743 | -7310 | -4231 | -7796 | -7971 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ*** | - | ***-165677*** | ***-30156*** | ***87343*** | ***-50782*** | ***-45452*** | ***206046*** | ***-155004*** | ***92617*** | ***129310*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | - | -59384 | -6249 | 5117 | -5724 | 10700 | 29350 | 29767 | 15044 | -574 |
| Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով | - | -86833 | -6424 | 104191 | -13755 | -62899 | 161660 | -194186 | 42508 | 171524 |
| Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով | - | 8809 | -19555 | -18732 | -29966 | 5789 | 14582 | 7868 | 33733 | -38228 |
| Այլ հաշիվներ | - | -28269 | 2073 | -3233 | -1338 | 958 | 454 | 1547 | 1334 | -3413 |
| Այլ հաշիվներ ՀՀ դրամով | - | -29525 | 2422 | -4041 | -428 | 796 | 566 | 1091 | 86 | -3603 |
| Այլ հաշիվներ արտարժույթով | - | 1256 | -349 | 808 | -910 | 162 | -113 | 457 | 1248 | 190 |
| *(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)* | | | | | | | | | | |
| ***ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ*** | - | ***-0.9*** | ***-6.9*** | ***-5.7*** | ***-7.0*** | ***2.6*** | ***6.7*** | ***2.3*** | ***7.0*** | ***-1.7*** |
| ***ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | - | ***-21.3*** | ***8.1*** | ***23.6*** | ***2.3*** | ***-8.8*** | ***20.2*** | ***-20.7*** | ***3.2*** | ***21.0*** |
| Կառավարություն | - | -28.0 | 8.1 | -8.7 | 4.3 | 6.6 | -11.3 | -0.5 | 0.5 | -3.3 |
| Բանկեր | - | -7.8 | 1.3 | 29.3 | -1.6 | -12.6 | 29.4 | -19.3 | 3.8 | 23.2 |
| ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-) | - | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Զուտ այլ ակտիվներ | - | 0.7 | -0.3 | 1.2 | 2.0 | -0.4 | -1.6 | -0.9 | -1.7 | -1.8 |
| ***ՓՈՂԻ ԲԱԶԱ*** | - | ***-9.0*** | ***-1.8*** | ***5.3*** | ***-2.9*** | ***-2.7*** | ***12.6*** | ***-8.4*** | ***5.5*** | ***7.2*** |
| ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ | - | -6.5 | -0.7 | 0.6 | -0.7 | 1.3 | 3.4 | 3.4 | 1.6 | -0.1 |
| Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով | - | -22.1 | -2.1 | 34.9 | -3.4 | -16.2 | 49.5 | -39.8 | 14.5 | 51.0 |
| Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով | - | 1.8 | -3.9 | -3.9 | -6.5 | 1.3 | 3.3 | 1.7 | 7.3 | -7.7 |
| Այլ հաշիվներ | - | -58.9 | 10.5 | -14.9 | -7.2 | 5.6 | 2.5 | 8.3 | 6.6 | -15.9 |

*[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:*

*[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

*[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

## ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*մլն ՀՀ դրամ*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2023 | 2024 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս |
| **ՀԱԱ (փոխարկելի արտարժույթով)** | **-769232** | **-756777** | **-707555** | **-728121** | **-693278** | **-645787** | **-706081** | **-717611** | **-804077** | **-838354** |
| Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով | 1100660 | 1021399 | 1218707 | 1247419 | 1282278 | 1280211 | 1182062 | 1216154 | 1044007 | 1044362 |
| Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-) | -1558875 | -1470943 | -1616143 | -1664723 | -1664048 | -1617034 | -1576480 | -1622103 | -1530977 | -1559870 |
| Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-) | -311018 | -307233 | -310119 | -310816 | -311508 | -308963 | -311662 | -311662 | -317108 | -322846 |
| **ՀՆԱ** | **5138002** | **5073833** | **5071688** | **5051088** | **4968862** | **5120737** | **5181622** | **5245885** | **5425597** | **5492825** |
| Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ | 1438169 | 1426052 | 1460505 | 1520944 | 1419566 | 1439435 | 1481869 | 1494501 | 1514603 | 1556118 |
| Պահանջներ Կառավարության նկատմամբ | 1447707 | 1435469 | 1469910 | 1530213 | 1428649 | 1448328 | 1490705 | 1503233 | 1523339 | 1564728 |
| Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-) | -9538 | -9417 | -9405 | -9269 | -9083 | -8893 | -8836 | -8733 | -8736 | -8610 |
| Զուտ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ | 381387 | 337776 | 304922 | 217258 | 186608 | 223310 | 197339 | 186218 | 241747 | 207790 |
| Պահանջներ ԿԲ-ի նկատմամբ | 1018172 | 921155 | 895649 | 985583 | 944588 | 882270 | 1057646 | 873298 | 955235 | 1092113 |
| Պարտավորություններ ԿԲ-ի նկատմամբ (-) | -636785 | -583379 | -590728 | -768325 | -757980 | -658960 | -860307 | -687080 | -713488 | -884323 |
| Տնտեսություն | 5004327 | 5030961 | 5073859 | 5120015 | 5161369 | 5272474 | 5375279 | 5473382 | 5652483 | 5798093 |
| Ձեռնարկություններ | 2294823 | 2277282 | 2289906 | 2302883 | 2299037 | 2364657 | 2423166 | 2438048 | 2520518 | 2567391 |
| Դրամով | 900310 | 908070 | 914803 | 936604 | 953054 | 977952 | 999085 | 1011763 | 1019776 | 1040186 |
| Արտարժույթով | 1339423 | 1309287 | 1313876 | 1305683 | 1286457 | 1327405 | 1363306 | 1360554 | 1430556 | 1457071 |
| Արժեթղթեր | 55089 | 59926 | 61226 | 60596 | 59526 | 59300 | 60774 | 65730 | 70186 | 70134 |
| Տնային տնտեսություններ | 2420254 | 2451568 | 2485759 | 2525730 | 2566885 | 2609150 | 2654724 | 2699442 | 2760995 | 2829902 |
| Դրամով | 2138226 | 2171781 | 2207160 | 2247286 | 2290267 | 2336932 | 2385243 | 2433054 | 2494296 | 2561348 |
| Արտարժույթով | 282028 | 279787 | 278599 | 278444 | 276617 | 272218 | 269481 | 266388 | 266699 | 268554 |
| Շահույթ չհետապնդող կազմակերպություններ | 11580 | 11607 | 10958 | 9210 | 8681 | 9653 | 9801 | 9463 | 36317 | 69035 |
| Դրամով | 6606 | 6774 | 6716 | 6681 | 6502 | 7203 | 7157 | 6951 | 6824 | 5738 |
| Արտարժույթով | 4974 | 4833 | 4242 | 2528 | 2180 | 2450 | 2645 | 2512 | 29493 | 63297 |
| Այլ ֆինանսական կազմակերպություններ | 277670 | 290503 | 287237 | 282192 | 286766 | 289014 | 287588 | 326429 | 334653 | 331765 |
| Դրամով | 215736 | 226576 | 229508 | 223335 | 227983 | 231097 | 227513 | 263641 | 274804 | 276196 |
| Արտարժույթով | 61934 | 63927 | 57729 | 58857 | 58783 | 57917 | 60075 | 62788 | 59849 | 55569 |
| Զուտ այլ ակտիվներ | -1685881 | -1720956 | -1767599 | -1807129 | -1798681 | -1814482 | -1872866 | -1908215 | -1983236 | -2069176 |
| Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով | 126827 | 125011 | 121855 | 71959 | 78673 | 73339 | 78925 | 79670 | 77025 | 83680 |
| Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով | 37277 | 37069 | 30040 | 33537 | 24242 | 22214 | 22529 | 28921 | 37188 | 38342 |
| Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (-) | -29633 | -33452 | -22632 | -25907 | -17996 | -17930 | -13342 | -15398 | -29142 | -30820 |
| Ներդրումներ փայաբաժիններում | 35909 | 36488 | 37462 | 27027 | 28169 | 28747 | 29260 | 29715 | 30470 | 30934 |
| Միջբանկային պահանջներ | 146295 | 141270 | 138521 | 114654 | 125185 | 136970 | 129789 | 124460 | 142449 | 151663 |
| Այլ ակտիվներ | 420210 | 409102 | 406024 | 400282 | 389139 | 394540 | 400611 | 396529 | 407929 | 415193 |
| Միջբանկային պարտավորություններ (-) | -141295 | -141027 | -135223 | -110104 | -122778 | -133506 | -125857 | -119344 | -137680 | -141123 |
| Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-) | -246908 | -250156 | -259563 | -244698 | -249557 | -254365 | -277078 | -297187 | -310797 | -317236 |
| Կապիտալ հաշիվներ (-) | -1337172 | -1379212 | -1409076 | -1416978 | -1435435 | -1454455 | -1480042 | -1505766 | -1543097 | -1566574 |
| Այլ պարտավորություններ (-) | -697390 | -666048 | -675006 | -656901 | -618321 | -610036 | -637661 | -629816 | -657582 | -733235 |
| **ԱՎԱՆԴՆԵՐ** | **4368770** | **4317056** | **4364132** | **4322967** | **4275584** | **4474951** | **4475541** | **4528275** | **4621520** | **4654472** |
| Դրամով ավանդներ | 2602926 | 2562604 | 2593495 | 2615327 | 2609717 | 2707461 | 2711399 | 2768395 | 2832351 | 2879056 |
| Ցպահանջ ավանդներ | 1232234 | 1165995 | 1175332 | 1178297 | 1155267 | 1245119 | 1231728 | 1258895 | 1289564 | 1283476 |
| Ժամկետային ավանդներ | 1370693 | 1396609 | 1418162 | 1437030 | 1454450 | 1462342 | 1479671 | 1509500 | 1542786 | 1595580 |
| Արտարժույթով ավանդներ | 1765844 | 1754452 | 1770638 | 1707640 | 1665868 | 1767490 | 1764142 | 1759879 | 1789169 | 1775415 |
| Ցպահանջ ավանդներ | 868656 | 853453 | 876512 | 833771 | 799634 | 891205 | 884261 | 889064 | 914311 | 901932 |
| Ժամկետային ավանդներ | 897187 | 901000 | 894126 | 873869 | 866234 | 876285 | 879881 | 870815 | 874858 | 873483 |

## ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*մլն ՀՀ դրամ*

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2023 | 2024 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս |
| **ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)** | **-4673** | **-7756** | **-8966** | **-4216** | **-1857** | **1673** | **7137** | **10118** | **5299** | **-88** |
| Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով | 35252 | 31742 | 30819 | 33940 | 36499 | 40593 | 45378 | 44558 | 41640 | 37833 |
